ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍԱՆՀԻԳԵՆԻԿ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ՏՄԲՔ-ՄԱԱՊՁԲ18/2

ք. Բերդ «23» փետրվարի 2018թ.

Բերդի համայնքապետարանը ի դեմս համայնքի ղեկավար Հ. Մանուչարյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և անհատ ձեռնարկատեր Ալվարդ Մելիքյան, որը գործում է անհատ ձեռնարկատիրոջ վկայականի հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Ընդունել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 746400/յոթ հարյուր քառասունվեց հազար չորս հարյուր / ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության _2 օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:[1]

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Բերդի համայնքապետարանը	ԱՁ Ալվարդ Մելիքյան
ՀՀ Տավուշի մարզ, ք Բերդ,	ՀՀ Տավուշի մարզ, ք Բերդ,
Լևոն Բեկի փողոց շենք 5	Հայկ Նահապետի փողոց շենք 3
ՀՎՀՀ 07620119	ՀՎՀՀ84048228
Հ/Հ 900382121029	Հ/Հ 2477802272180000
ՀՀ ֆին. նախարարության գործառնականական վարչություն	<<Արդշինբանկ>> ՓԲԸ, Տավուշ մ/ճ
Համայնքի ղեկավար՝ Հ. Մանուչարյան	
---------- /ստորագրություն/ Կ.Տ	---------- /ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 1
« 23» փետրվարի 2018թ. կնքված
ՀՀ ՏՄԲՔ-ՄԱԱՊՁԲ18/2 *ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցի կ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	ժամկետը**
1	39831210-1	սպասքի լվացման մածուկ	ՈԴ	Մածուկանման զանգված, օգտագործված հոտավորիչի հոտով, գույնը՝ ըստ լվացող միջոցների գույնի որոշման սանդղակի, ջրածնային ցուցիչը (pH)՝ 9-10,5, մակերևութաակտիվ նյութի զանգվածային մասը՝ ոչ պակաս 18 %, ջրում չլուծվող նյութերի զանգվածային մասը՝ ոչ ավելի 3 %, խոնավության զանգվածային մասը՝ ոչ ավելի 50 %, չափածրարված պոլիմերային կամ ապակե 1 լիտրանոց տարաներում՝:	լ	800	28000	35	ՀՀ Տավուշի մարք, ք. Բերդ, Լևոն Բեկի 5	35	24.02.2018թ - 25.12.2018թ
2	39831272-1	Սպունգ, աման լվանալու	ՈԴ	Ուղանկյունաձև, երկարությունը 120 մմ, լայնությունը 70մմ, հաստությունը 25մմ, մի կողմից երեսապատված արհեստական կտորով:	հատ	250	9000	36	ՀՀ Տավուշի մարք, ք. Բերդ, Լևոն Բեկի 5	36	24.02.2018թ - 25.12.2018թ

3	39832100-1	Սպասքի լվացման փոշի	ՈԴ	Մաքրող փոշի՝օժտված է մանրեասպան հատկությամբ, հեռացնում է դժվար հեռացվող կեղտաբծեր	հատ	500	17500	35	<< Տավուշ ի մարք, ք. Բերդ, Լևոն Բեկի 5	35	24.02.2018թ - 25.12.2018թ
4	39831247-1	զուգարանների մաքրման նյութեր		Զուգարանակոնքի մաքրման միջոց, հեռացնում է ժանգը և նստվածքը, հանդիսանում է մանրեասպան, 500մլ	լ	1100	77000	70	<< Տավուշ ի մարք, ք. Բերդ, Լևոն Բեկի 5	70	24.02.2018թ - 25.12.2018թ
5	39831245-1	ձեռքի հեղուկ օճառ	ՈԴ	Մակերևութաակտիվ նյութերից և տարբեր կենսաբանական ակտիվ նյութերի լուսամզվածքներից պատրաստված օճառ, հոտավետ, ջրածնային իոնների խտությունը՝ 7-10 pH, ջրում չլուծվող խառնուկների պարունակությունը ոչ ավել՝ 15%-ից, չօճառացվող օրգանական նյութերի և ճարպերի պարունա-կությունը՝ ոչ ավել 0,5 %-ից: 250 մլ տարայով:	հատ	550	71500	130	<< Տավուշ ի մարք, ք. Բերդ, Լևոն Բեկի 5	130	24.02.2018թ - 25.12.2018թ
6	39836000-1	ավել	<<	Սենյակի հատակը մաքրելու համար, բնական, տեղական արտադրության, քաշը չոր վիճակում (350-500)գրամ, երկարությունը (85-90)սմ, ավլող մասի լայնքը (35-40)սմ:	հատ	1300	91000	70	<< Տավուշ ի մարք, ք. Բերդ, Լևոն Բեկի 5	70	24.02.2018թ - 25.12.2018թ
7	33761000-1	զուգարանի թուղթ	<<	Երկշերտ կամ եռաշերտ, 9,8սմX12,5սմ, 150 թերթիկ, երկ. 18,75մ, պատրաստված գրելու թղթից, լրագրաթղթից և այլ թղթերի թափոններից, թույլատրված սանիտարահիգիենիկ նշանակության ապրանքներ պատրաստելու համար: Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ << կառավարության 2006 թ. հոկտեմբերի 19-ի N 1546-Ն	հատ	100	15000	150	<< Տավուշ ի մարք, ք. Բերդ, Լևոն Բեկի 5	150	24.02.2018թ - 25.12.2018թ

				որոշմամբ հաստատված "Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի":							
8	39812410-1	Կահույքի փայլեցման միջոց	<<	Փայլեցնող միջոց փայտյա կահույքի համար. հեղուկի 300 մլ–ոց տարայով:	հատ	800	36000	45	<< Տավուշ ի մարք, ք. Բերդ, Լևոն Բեկի 5	45	24.02.2018թ - 25.12.2018թ
9	39812410-2	Կահույքի փայլեցման միջոց	ՈԴ	Փայլեցնող միջոց փայտյա կահույքի համար. վակումային բալոնիկով,:	հատ	2400	36000	15	<< Տավուշ ի մարք, ք. Բերդ, Լևոն Բեկի 5	15	24.02.2018թ - 25.12.2018թ
10	39831273-1	հատակի մաքրման նյութ/լամինատի	Գերմանիա	Մաքրող հեղուկ 1լ տարայով , լամինատի համար: Emsal կամ համարժեք:	հատ	2500	22500	9	<< Տավուշ ի մարք, ք. Բերդ, Լևոն Բեկի 5	9	24.02.2018թ - 25.12.2018թ
11	39831273-2	հատակի մաքրման նյութ/գորգերի	Թայլանդ	Մաքրող հեղուկ 450մլ տարայով, գորգերի համար: «VANISH» կամ համարժեք:	հատ	2000	10000	5	<< Տավուշ ի մարք, ք. Բերդ, Լևոն Բեկի 5	5	24.02.2018թ - 25.12.2018թ
12	39811300-1	օդի հոտավետ հոտազերծիչ	ՈԴ	Փակ սենյակի հոտի թարմացման համար, վակումային բալոնիկով, թարմ ծաղկային բուրմունքով	հատ	500	25000	50	<< Տավուշ ի մարք, ք. Բերդ, Լևոն Բեկի 5	50	24.02.2018թ - 25.12.2018թ
13	31531210-1	էլեկտրական լամպ,	<<	էլեկտրական լամպ 230 Վ լարման, 50 Հց հաճախականության, 100 Վտ հզորությամբ, թափանցիկ, տանձաձև կամ սնկաձև, կոթառը E 27/27 տիպի: Անվտանգությունը՝ ըստ << կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված:	հատ	100	20000	200	<< Տավուշ ի մարք, ք. Բերդ, Լևոն Բեկի 5	200	24.02.2018թ - 25.12.2018թ

				Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի:							
14	31531300-1	Տնտեսող լամպեր	<<	էլեկտրական լամպ 85 Վտ հզորությամբ, սպիրալաձև, կոթառը E 27/27 տիպի: Անվտանգությունը՝ ըստ << կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված: Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի:	հատ	2200	110000	50	<< Տավուշ ի մարք, ք. Բերդ, Լևոն Բեկի 5	50	24.02.2018թ - 25.12.2018թ
15	30192210-1	պոլիմերային ինքնակպչուն ժապավեն/սկոչ/	<<	Գլանափաթեթված ժապավեն 48 մմ՝ լայնությամբ, սոսնձային շերտի հաստությունը՝ 0,018-0,030 մմ կամ 0,030-0,060 մմ, ժապավենի երկարությունը՝ 100 մ:	հատ	300	3000	10	<< Տավուշ ի մարք, ք. Բերդ, Լևոն Բեկի 5	10	24.02.2018թ - 25.12.2018թ
16	39831281-1	ապակի մաքրելու լաթ	<<	Նախատեսվ ապապակի մաքրման համար,: 66x43x02	հատ	1300	65000	50	<< Տավուշ ի մարք, ք. Բերդ, Լևոն Բեկի 5	50	24.02.2018թ - 25.12.2018թ
17	39831282-1	կահույք մաքրելու լաթ	<<	Նախատեսված կահույք մաքրման համար	հատ	600	30000	50	<< Տավուշ ի մարք, ք. Բերդ, Լևոն Բեկի 5	50	24.02.2018թ - 25.12.2018թ
18	39831283-1	հատակ մաքրելու լաթ	<<	Լաթեր 45x80սմ, բամբակյա գործվածքից հատակը մաքրելու համար	հատ	800	40000	50	<< Տավուշ ի մարք, ք. Բերդ, Լևոն Բեկի 5	50	24.02.2018թ - 25.12.2018թ
19	18141100-1	ձեռնոց	<<	տնտեսական, ամբողջությամբ ռետինե,երկար թեվքերով, տարբեր չափերի	հատ	300	15000	50	<< Տավուշ ի մարք, ք. Բերդ, Լևոն Բեկի 5	50	24.02.2018թ - 25.12.2018թ

20	19641000-1	պոլիէթիլենային պարկ աղբի համար	<<	Աղբի պոլիէթիլենային տոպրակներ՝ սև կամ գունավոր, աղբը հավաքելու համար: 10լ, 30 հատ	հատ	500	22500	45	<< Տավուշ ի մարք, ք. Բերդ, Լևոն Բեկի 5	45	24.02.2018թ - 25.12.2018թ
21	39831444-1	օճառ տնտեսական՝ կապույտ	<<	Օճառ, տնտեսական, կապույտ	հատ	120	2400	20	<< Տավուշ ի մարք, ք. Բերդ, Լևոն Բեկի 5	20	24.02.2018թ - 25.12.2018թ
Ընդամենը							746400	X	X	X	X

** մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*
*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" << օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

ԳՆՈՐԴ

Բերդի համայնքապետարանը
ՀՀ Տավուշի մարզ, ք Բերդ,
Լևոն Բեկի փողոց շենք 5
ՀՎՀՀ 07620119
Հ/Հ 900382121029
ՀՀ ֆին. նախարարության գործառնականական վարչություն
Համայնքի ղեկավար՝ Հ. Մանուչարյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

ԱՁ Ալվարդ Մելիքյան
ՀՀ Տավուշի մարզ, ք Բերդ,
Հայկ Նահապետի փողոց շենք 3
ՀՎՀՀ84048228
Հ/Հ 2477802272180000
<<Արդշինբանկ>> ՓԲԸ, Տավուշ մ/ճ

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
« 23 » փետրվարի 20 18թ. կնքված
***ՀՀ ՏՄԲՔ-ՄԱԱՊՁԲ18/2** ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	39831210-1	սպասքի լվացման մածուկ	0	7000	7000	14000	14000	14000	21000	21000	21000	28000	28000	28000	***28000***
2	39831272-1	Սպունգ, աման լվանալու	0	2250	2250	4500	4500	4500	6750	6750	6750	9000	9000	9000	***9000***
3	39832100-1	Սպասքի լվացման փոշի	0	4375	4375	8750	8750	8750	13125	13125	13125	17500	17500	17500	***17500***
4	39831247-1	զուգարանների մաքրման նյութեր	0	19250	19250	38500	38500	38500	57750	57750	57750	77000	77000	77000	***77000***
5	39831245-1	ձեռքի հեղուկ օճառ	0	17875	17875	35750	35750	35750	53625	53625	53625	71500	71500	71500	***71500***

6	39836000-1	ավել	0	22750	22750	45500	45500	45500	68250	68250	68250	91000	91000	91000	***91000***
7	33761000-1	զուգարանի թուղթ	0	3750	3750	7500	7500	7500	11250	11250	11250	15000	15000	15000	***15000***
8	39812410-1	Կահույքի փայլեցման միջոց	0	9000	9000	18000	18000	18000	27000	27000	27000	36000	36000	36000	***36000***
9	39812410-2	Կահույքի փայլեցման միջոց	0	9000	9000	18000	18000	18000	27000	27000	27000	36000	36000	36000	***36000***
10	39831273-1	հատակի մաքրման նյութ/լամինատի	0	5625	5625	11250	11250	11250	16875	16875	16875	22500	22500	22500	***22500***
11	39831273-2	հատակի մաքրման նյութ/գորգերի	0	2500	2500	5000	5000	5000	7500	7500	7500	10000	10000	10000	***10000***
12	39811300-1	օդի հոտավետ հոտազերծիչ	0	6250	6250	12500	12500	12500	18750	18750	18750	25000	25000	25000	***25000***
13	31531210-1	էլեկտրական լամպ,	0	5000	5000	10000	10000	10000	15000	15000	15000	20000	20000	20000	***20000***
14	31531300-1	Տնտեսող լամպեր	0	27500	27500	55000	55000	55000	82500	82500	82500	110000	110000	110000	***110000***
15	30192210-1	պոլիմերային ինքնակպչուն ժապավեն/սկոչ/	0	750	750	1500	1500	1500	2250	2250	2250	3000	3000	3000	***3000***
16	39831281-1	ապակի մաքրելու լաթ	0	16250	16250	32500	32500	32500	48750	48750	48750	65000	65000	65000	***65000***
17	39831282-1	կահույք մաքրելու լաթ	0	7500	7500	15000	15000	15000	22500	22500	22500	30000	30000	30000	***30000***

18	39831283-1	հատակ մաքրելու լաթ	0	10000	10000	20000	20000	20000	30000	30000	30000	40000	40000	40000	***40000***
19	18141100-1	ձեռնոց	0	3750	3750	7500	7500	7500	11250	11250	11250	15000	15000	15000	***15000***
20	19641000-1	պոլիէթիլենային պարկ աղբի համար	0	5625	5625	11250	11250	11250	16875	16875	16875	22500	22500	22500	***22500***
21	39831444-1	օճառ տնտեսական՝ կապույտ	0	600	600	1200	1200	1200	1800	1800	1800	2400	2400	2400	***2400***
	Ընդամենը		***0***	***186600***	***186600***	***373200***	***373200***	***373200***	***559800***	***559800***	***559800***	***746400***	***746400***	***746400***	***746400***

ԳՆՈՐԴ

Բերդի համայնքապետարանը
ՀՀ Տավուշի մարզ, ք Բերդ,
Լևոն Բեկի փողոց շենք 5
ՀՎՀՀ 07620119
Հ/Հ 900382121029
ՀՀ ֆին. նախարարության գործառնականական վարչություն
Համայնքի ղեկավար՝ Հ. Մանուչարյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

ԱՁ Ալվարդ Մելիքյան
ՀՀ Տավուշի մարզ, ք Բերդ,
Հայկ Նահապետի փողոց շենք 3
ՀՎՀՀ84048228
Հ/Հ 2477802272180000
<<Արդշինբանկ>> ՓԲԸ, Տավուշ մ/ճ

/ստորագրություն/
Կ.Տ